ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 19
/օրակարգի հարցի համարը/

09.12.2011թ.

## 2011Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/որոշման վերնագիրը մեծատառերով/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել 2011թ գույքագրման արդյունքները՝

Հիմնական միջոցներ՝ 75200 դրամ

Շրջանառու միջոցներ՝ 29505 դրամ

Աղաբաբյան Է.

Այվազյան Է.

Հայրապետյան Ս.

Ղարիբյան Է.

Ղարսույան Ա.

Պետրոսյան Վ.

Սաֆարյան Ա.

կ/տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 20                      09.12.2011թ

/օրակարգի հարցի համարը/

## 2011Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/որոշման վերնագիրը մեծատառերով/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով ավագանին

## ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի ղեկավարի դրույքաչափը, աշխատակիցների թվաքանակը թվով 14 հոգի, աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ ձևով՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ հազ.դրամ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 120,0 |
| Հայեցողական պաշտոն | | |
| Համայնքի ղեկ. տեղակալ | 1 | 96,0 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար/1.2/ | 1 | 96,0 |
| Համայնքի ղեկ.աշխ.գլխ.մասնագետ / 2.3/ | 1 | 90,0 |
| Համ.ղեկ.աշխ. առաջատար մասնագետ/3.1/ | 1 | 80,0 |
| Համ.ղեկ.աշխ.1-ին կարգի մասնագետ/3.2/ | 1 | 70,0 |
| Համ.ղեկ.աշխ.2-րդ կարգի մասնագետ/3.3/ | 1 | 40,0 |
| Պայմանագրային աշխատողներ | | |
| Ակումբավար | 1 | 35,0 |
| Գրադարանավար | 1 | 40,0 |
| Օպերատոր | 1 | 70,0 |
| | | |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Պահակ | 2 | 35,0 |
| Հավաքարար | 1 | 35,0 |
| Վարորդ աղբահանության գծով | 1 | 102,0 |

Աղաբաբյան Է. կողմ
Այվազյան Է. կողմ
Հայրապետյան Ս. կողմ
Ղարիբյան Է. կողմ
Ղարսոյան Ա. կողմ
Պետրոսյան Վ. կողմ
Սաֆարյան Ա. կողմ

կ/տ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N 21 - Ն

09.12.2011թ

## 2012Թ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ավագանին

ՈՐՈՇԵՑ

21. Սայաթ-Նովա համայնքի վարչական տարածքում 2012թ. համար սահմանել տուրքեր և վճարներ հետևյալ դրույքաչափերով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝
ա) Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական, բնակելի, այդ

թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի

մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության

օբյեկտների համար՝ 7500 դրամ

բ) Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար՝ 15 000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար՝ 25 000 դրամ,

բգ) 1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար՝ 35 000 դրամ,

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար՝ 2500 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

Չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական

նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500դրամ: 1,2,3 կետերի համար կիրառված է 0,5 գործակիցը:
4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղակա ն տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

բ) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար 25 000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000 դրամ

գ) բաղնիքների /սաունաների/ համար 200 000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու ըստ յուրաքանչյուր տեղի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
   ա) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ
   բ) այլ արտաքին գովազդի համար 500 դրամ
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:
10. Համայնքի տարածքում հողամասերի չափագրման հողերի չափերի ճշտման աշխատանքների կատարման համար տեղական տուրքի վճարը սահմանել 1000 դրամ:
11. Մրցույթի և աճուրդի մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:

Աղաբաբյան Է.

Այվազյան Է.

Հայրապետյան Ս.

Ղարիբյան Է.

Ղարսոյան Ա.

Պետրոսյան Վ.

Սաֆարյան Ա.

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 22 - «Ն»
/ օրակարգի հարցի համարը/

13.12.2011թ.

## 2011Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/որոշման վերնագիրը մեծատառերով/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ավագանին

## ՈՐՈՇԵՑ

Կատարել համայնքի 2011թ. վարչական բյուջեի եկամուտների և ծախսերի մասով հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջե

Համայնքի վարչական բյուջեի 11.1.2 պահուստային ֆոնդի 4891 հոդվածը պակասեցնել 72.0 հազ. դրամով և այն ուղղել՝

8.2.1 գրադարան

4111 աշխատավարձ հոդվածին 42.0 հազ.դրամ

1.6.1 ընդհանուր բնույթի այլ ծառայություն

4819 նվիրատվ. այլ շահույթ չհետապնդող կազմակ. 30.0 հազ. դրամ

Հիմք ընդունելով Արարատի մարզպետի 23.06.2011թ-ի թիվ 1/7/1-2/2804-11 գրությունը

համայնքի պատվիրակված լիազորությունների համար գումար նախատեսել 01.07.2011թ-ից և տարեկան նախատեսված 600.0 հազ. դրամը պակասեցնել 300.0 հազ դրամով:

4.2.1 գյուղատնտեսություն

4111 աշխատավարձ 240.0 հազ. դրամ

4131 սոց. վճար 60.0 հազ դրամ

Աղաբաբյան Է.

Այվազյան Է.

Հայրապետյան Ս.

Ղարիբյան Է.

Ղարսոյան Ա.

Պետրոսյան Վ.

Սաֆարյան Ա.

կ/տ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N 23-"Ն"
/օրակարգի հարցի համարը/

13.12.2011թ

## 2011Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

/որոշման վերնագիրը մեծատառերով/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ավագանին

## ՈՐՈՇԵՑ

Հաստատել Սայաթ-Նովա համայնքի 2012 թ. վարչական բյուջեի նախագիծը՝

- Եկամուտների գծով 32142.9 հազ. դրամ
- Ծախսերի գծով 32142.9 հազ. դրամ

Աղաբաբյան Է.
Այվազյան Է.
Հայրապետյան Ս.
Ղարիբյան Է.
Ղարսոյան Ա.
Պետրոսյան Վ.
Սաֆարյան Ա.

Կ/Տ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ